

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 02
վիճակագրության պետական խորհրդի նիստի

04.02.2011թ.

Ժ.11: 00

Մասնակցում էին՝

Ս.Մնացականյան (*խորհրդի նախագահ*), Գ.Անանյան, Գ.Գևորգյան, Յու.Պողոսյան, Ս.Դավթյան, Ա.Աղազարյան (*խորհրդի անդամներ*)

Հ. Գրիգորյան (*խորհրդի քարտուղար*)

Հրավիրված էին՝ Լ.Միրզոյան (ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ), Ա. Հայրապետյան (աշխատակազմի ղեկավար), Ա.Հակոբյան (գլխավոր հաշվապահ), Ս. Պողոսյան (իրավաբանական բաժնի պետ), Լ.Պետրոսյան (վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետ), Լ.Մարկոսյան (տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի գլխավոր մասնագետ):

Օրակարգի նախագծում՝ երեք հարց.

1. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմ պետական կառավարչական հիմնարկի 2010 թվականի հաշվեկշիռները՝ ըստ ծրագրերի հաստատելու մասին» հարցը:

/Ձեկուցող՝ Ա.Հայրապետյան/

2. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից՝ 2009 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության անվանագերծված տվյալների ըստ հայցվողի ցուցանիշների կտրվածքով բազան Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոնին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

/Ձեկուցող՝ Լ.Մարկոսյան/

3. Այլ հարցեր

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի նախագահի կողմից ներկայացվեց խորհրդի նիստի օրակարգի նախագիծը, որը հաստատվեց ամբողջությամբ և միաձայն:

/Քվեարկության արդյունքները-կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Լսեցին՝

1. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմ պետական կառավարչական հիմնարկի 2010 թվականի հաշվեկշիռները՝ ըստ ծրագրերի հաստատելու մասին» հարցը:

/Ձեկուցող՝ Ա.Հայրապետյան/

Որոշեցին՝

հաստատել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի 2010 թվականի հաշվեկշիռները՝ ըստ ծրագրերի:

/Անհատական/

/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Լսեցին՝

2. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից՝ 2009 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության անվանագերծված տվյալների ըստ հայցվողի ցուցանիշների կտրվածքով բազան Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոնին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

/Ձեկուցող՝ Լ.Մարկոսյան/

Որոշեցին՝

թույլատրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնին՝ Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոնին տրամադրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից 2009 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության արդյունքում ձևավորված անվանագերծված տվյալների ըստ հայցվողի ցուցանիշների կտրվածքով բազան՝ զուտ գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար օգտագործելու, այլ անձանց չփոխանցելու, չվաճառելու, չիրապարակելու և այլ կարգով չտարածելու պայմաններով:

/Անհատական/

/Զվեարկության արդյունքները- կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ